## 26. ՕԽՏՆ ՈՒ ԱԽՃԻԳՅԸ

Ինում ա չի ինում, մին մարթ ա ինում։ Էս մարթին ինում ա օխտը ախճիգյ։ Էս մարթը շատ քյասիբ ա ինում, օրական օխտը ցորեն ա ըշխատում, պիրում մին-մին պժեհնում ա ըխճկորանցը։

Էս մարթին կուճի ախճիգյը խելունք ա ինում, ասում ա. «Մին ցորենը հինչ ա, վըեր հինչ օտիմ, լավն էն ա, վըեր թուփ անիմ, բալքյամ մին պեհնու մասրափ տեռնա»։ Մին խիլլա վըեր թուփ ա անում, էս կուճի ախճիգյը ետ ա տեռնում հորը թա. «Ա՛ հաբ, պա խե՞ մունք վար չընք անում, էս խալխը վըեր վար ըն անում, մրզ հետե ը՞ն վար անում»։ Հաբը թա. «Ա՛ բալա, հո՞ւնց վար անիմ, վըեր սրերմը չօնինքյ»։ Պուճուր ախճիգյն ասում ա. «Վա՛խել մի, ա՛ հաբ, տու քյինա վար ըրա, ես սրերմին ճարը կտրեսնամ»։

Հաբը քյինում ա վար անում, կուճի ախճիգյն էլ թուփ ըրած ցորենն ա տանում, տամ հորը։ Վարան ետ տըռնալիս տեղը էս ախճիգյն ասում ա. «Աստու՞ծ, տու հանց անիս, վըեր էքյուց մեր արտը կնանչի»։ Հունցը ասում ա էդ ախճիգյը, իտի էլ ինում ա։ Էքսյը կյամ ըն տրեսնում, արտը կնանչած։

Մհենդյ էլ ասում ա. «Աստո՞ւծ, տու հանց անիս, վըեր էքյուց կյամ տրեսնամ մեր արտը հրսած»։ Իտի էլ ինում ա, էքյսը կյամ ըն տրեսնում արտը հրսած։ Էս դոնում ասում ա. «Աստու՞ծ, հանց ըրա, վըեր էքյուց կյամ տրեսնամ մեր արտը հընձած»։ Էքյսը կյամ ա տրեսնում արտը հնձած, կալը քըցած, ցորենը թակած, մին թե էլ մաչին չարխ ըրած։ Էս մարթը վըեր մուտանում ա թա թեն եր օնի, մին էլ վրռվրեռ ա քյինամ։ Տու մեր ասել, էս թիյին կոթավը օխծը զիրավ ա տվալ։ Մարթը ըղաչանք, պղատանք ա անում օխ-

ծեն, թա. «Հի՞նչ վրեր օղիս, քյեզ կտամ, թաքյի լհա՜, թողիս իմ խուխոցը ռուզին տոն քրցիմ»։

Օխծն ասում ա. «Ըխճրկերանցրդ մինն ինձ տո, թողիմ դանը տոն կրիս»։ Հաՙրը կյամ ա տոն, ըխճկորանցը պատմում. «Ծրղանա մինը պիտի էն օխծեն քյինա, վրեր ես կարիմ դանը տոն կրիմ»։

Լոխ ըխճրկերքը վախչում ըն տես ու տեն։ Մնում ա կուճի ախճիղյը։ Սա ասում ա. «Ա՜ հաՙր, իսկի էլ մետք մեր անել, ես կրքյինաՙմ էտ օխծեն, թաքյի լհա՜, տու դանը տոն քրցիս»։ Կուճի ախճիդյը կյամ ա հոր նհետ կալը։ Օխծը վրեր ա կյամ։ Էս մարթը գանը կրում, տոն ա քրցում, խրխոցը ռուզին ռուլուցնում։

Մհենգյ էլ խարար տանք կուճուր ըխճրկանը, մին էլ օխծեն անա։

Կուճի ախճիգյն ու օխծը հղե ըն ընկնում։

Մին պատառ վրեր քինամ ըն, օխծն ասում ա. «Ախճի՜գյ, տու յրվրշ-յավաշ քյինա, ես էլ էս ա կյամ ըմ»։ Ախճիգյը վրեր մին պատառ առաչ ա քյինամ, մին էլ ա ըսկանում մին ծրկըլթոց։ Ախճիդյը ետ ա եշում, տրեսնում, վրեր օխծը մին ծառու տակին մաչան ճրղված, կողքեն էլ մի նախշուն ջահիլ տղա կաղնած։ Տու մի ասիլ էս թաքավերին տղան ա իլալ օխծու կերպարանքով՝ կյամ ա ըխճրկանը ծեռքան փրռնում, տանում թաքավերեն պա-լատը, հորը նշանց տամ։ Թաքավերը հավան ա կենում ըխճրկանը, հրրսանեք անում, փսակում։ Պուճուր ախճիդյը մին քանի վախտան ետը ուրաՙն կոշտն ա պիրիլ տամ հորը, քվորցը։